Հայցվորի կողմից գրավոր միջնորդության տեսքով դատական ծախսերի հետ կապված պահանջ ներկայացված չլինելու հանգամանքով պայմանավորված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Երանոսշին» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1» ծածկագրով գնման պայմանագրի 01.03.2024թ. միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու և «Երանոսշին» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 11.03.2024թ. թիվ 110 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել 2022թ. մայիսի 19-ին կնքված թիվ «ՓՆՄԱՇՁԲ-22-10/6-1» ծածկագրով պայմանագրի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 2024թ. մարտի 1-ի միակողմանի մասնակի լուծումը:

Անվավեր ճանաչել «Երանոսշին» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության 2024թ. մարտի 11-ի թիվ 110 որոշումը:

ՀՀ պետական բյուջեից «Երանոսշին» ՍՊ ընկերությանը վերադարձնել 50,000.00 ՀՀ դրամ՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

Դատարանի 2024թ. մարտի 18-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծանոթություն: վճիռը մտել է օրինական ուժի մեջ

« » _____ 2025թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ